ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«02» օգոստոսի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-07/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.02.2016թ. թիվ 1/73-1/7331-16 գրությամբ ներկայացված քաղաքացի Արամ Հովհաննիսյանին (անձնագիր՝ AK 0576680) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 19.08.2015թ. թիվ 1/73-1/22111-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել քաղաքացի Արամ Հովհաննիսյանին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի

հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Մասնակցին Ցուցակում ներառելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 17.08.2015թ. թիվ 18-2/[906786]-15 գրությամբ ներկայացրել է «ՀՀ ՖՆ ԲԸՀԾՁԲ-11/15» ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) վերաբերող փաստաթղթերը:

Կենտրոնը 25.02.2016թ. թիվ 01/04.1/672-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 19.08.2015թ. թիվ 1/73-1/22111-15 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում (այսուհետ՝ Կենտրոն) կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով Կենտրոնը հայտնել է, որ քաղաքացի Արամ Հովհաննիսյանը գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտել է մեկ անգամ, ինչի արդյունքում գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցությունը դադարեցվել է, ուստի գտել ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության 19.08.2015թ. թիվ 1/73-1/22111-15 գրությամբ ներկայացված քաղաքացի Արամ Հովհաննիսյանին (անձնագրի համարը՝ AK056680) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Սակայն ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին ուղղված 26.02.2016թ. թիվ 1/73-1/7331-16 գրությամբ պահանջել է նախաձեռնել Արամ Հովհաննիսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ, քանի որ ըստ ՀՀ ֆինանսների նախարարության՝ քաղաքացի Արամ Հովհաննիսյանը գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունը խախտել է ավելի քան մեկ անգամ:

2. Քաղաքացի Արամ Հովհաննիսյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 01.09.2015թ. թիվ 01/04.1/2269-16 գրությամբ դիմել է քաղաքացի Արամ Հովհաննիսյանին:

Քաղաքացի Արամ Հովհաննիսյանը 23.09.2015թ. գրությամբ Կենտրոնին է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՖՆ ԲԸՀԾՁԲ-11/15» ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի վերաբերյալ Մասնակցի առարկությունները և հայտնել, որ 27.07.2015թ. ՀՀ ՖՆ ԳԿՎ գնումների համակարգման բաժնի առաջատար մասնագետից ստացել է գրություն այն մասին, որ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով Արամ Հովհաննիսյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից և առաջարկ՝ ներկայացնել պահանջվող փաստաթղթերը (հավելվածներ, պայմանագրեր և այլն): Մասնակցի կողմից ներկայացվել է նախկինում կատարված պայմանագրերի պատճենները, որը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է ոչ բավարար, որից հետո Արամ Հովհաննիսյանի կողմից ներկայացվել է լրացուցիչ պայմանագիր (2015թ. օգոստոսի 12-ին ներկայացվել է անգլերեն լեզվով կազմված և 2014թ. դեկտեմբերի 22-ին կնքված No.CS-CB PFM/INDV-3-1-1):

Մասնակիցը նշել է, որ վերը նշված պայմանագիրը ներկայացվել է անգլերեն լեզվով, քանի որ պայմանագրի նոտարական կարգով հայերեն թարգմանելը և հաստատելը գործնականում չափազանց բարդ և նախաձեռնելու դեպքում անորոշ ելքով խնդիր է:

<u>3. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 17.08.2015թ. թիվ 18-2/[906786] գրությամբ ներկայացրել է է «ՀՀ ՖՆ ԲԸՀԾՁԲ-11/15» ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

4. ՍՑ-ԳԲԽ-07/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 26.02.2016թ. թիվ 1/73-1/7331-16 գրությամբ ներկայացված քաղաքացի Արամ Հովհաննիսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՖՆ ԲԸՀԾՁԲ-11/15» ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև Արամ Հովհաննիսյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝

- 23.07.2015թ. ժամը 10:00-ին կայացած նիստի N 2 արձանագրության 5.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը հետաձգվել է երեք աշխատանքային օրով՝ պահանջելով քաղաքացի Արամ Հովհաննիսյանից ներկայացնել հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:
- 28.07.2015թ. ժամը 10:00-ին կայացած նիստի N 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը՝ քաղաքացի Արամ Հովհաննիսյանը, սահմանված կարգով չի ներկայացրել հրավերով պահանջված որակավորման չափանիշներն հիմնավորող փաստաթղթերը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշել է ևս երեք աշխատանքային օրով կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը և կրկին հնարավորություն տալ քաղաքացի Արամ Հովհաննիսյանին ներկայացնել ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումներ գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

- 04.08.2015թ. ժամը 10:00-ին կայացած նիստի N 4 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը՝ քաղաքացի Արամ Հովհաննիսյանը, սահմանված կարգով չի ներկայացրել հրավերով պահանջված որակավորման չափանիշներն հիմնավորող փաստաթղթերը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել քաղաքացի Արամ Հովհաննիսյանի հայտը:

3. Կենտրոնը 25.02.2016թ. թիվ 01/04.1/672-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 19.08.2015թ. թիվ 1/73-1/22111-15 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով Կենտրոնը հայտնել է, որ քաղաքացի Արամ Հովհաննիսյանը գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտել է մեկ անգամ, ինչի արդյունքում գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցությունը դադարեցվել է, ուստի գտել ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության 19.08.2015թ. թիվ 1/73-1/22111-15 գրությամբ ներկայացված քաղաքացի Արամ Հովհաննիսյանին (անձնագրի համարը՝ AK056680) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

4. Սակայն ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին ուղղված 26.02.2016թ. թիվ 1/73-1/7331-16 գրությամբ պահանջել է նախաձեռնել Արամ Հովհաննիսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ, քանի որ ըստ ՀՀ ֆինանսների նախարարության՝ քաղաքացի Արամ Հովհաննիսյանը գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունը խախտել է ավելի քան մեկ անգամ:

5. ՍՑ-ԳԲԽ-07/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.08.2015թ. թիվ 18-2/[906786]-15, 19.08.2015թ. թիվ 1/73-1/22111-15 և 26.02.2016թ. թիվ 1/73-1/7331-16 գրությունները ու կից փաստաթղթերը, Արամ Հովհաննիսյանի 23.09.2015թ. Կենտրոնին ուղղված գրությունը, «ՀՀ ՖՆ ԲԸՀԾՁԲ-11/15» ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգին մասնակցելու նպատակով Մասնակցի ներկայացրած հայտը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ***ավելի քան մեկ անգամ*** խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում

փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 52-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 65-րդ կետի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից

առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 27.07.2015թ. ծանուցմամբ (ahovhannisyan@amhaudit.am էլեկտրոնային հասցեին) հրավերով պահանջվող որակավորման պահանջներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է ներկայացրել Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից քաղաքացի Արամ Հովհաննիսյանին:

Այնուհետև, 28.07.2015թ. ժամը 10:00-ին կայացած նիստի N 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը՝ քացաքացի Արամ Հովհաննիսյանը, սահմանված կարգով չի ներկայացրել հրավերով պահանջված որակավորման չափանիշներն հիմնավորող փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովը որոշել է ևս երեք աշխատանքային օրով կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը և կրկին հնարավորություն տալ քաղաքացի Արամ Հովհաննիսյանին ներկայացնել Կարգի 65-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Որից հետո քաղաքացի Արամ Հովհաննիսյանի կողմից ներկայացվել է լրացուցիչ պայմանագիր (2015թ. օգոստոսի 12-ին ներկայացվել է անգլերեն լեզվով կազմված և 2014թ. դեկտեմբերի 22-ին կնքված No.CS-CB PFM/INDV-3-1-1), սակայն 04.08.2015թ. ժամը 10:00-ին կայացած նիստի N 4 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը՝ քացաքացի Արամ Հովհաննիսյանը, սահմանված կարգով չի ներկայացրել հրավերով պահանջված որակավորման չափանիշներն հիմնավորող փաստաթղթերը, ուստի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել քացաքացի Արամ Հովհաննիսյանի հայտը:

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքացի Արամ Հովհաննիսյանը գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտել է ընդամենը մեկ անգամ, ինչի արդյունքում գնման գործընթացին տվյալ

մասնակցի հետագա մասնակցությունը դադարեցվել է, ուստի առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 26.02.2016թ. թիվ 1/73-1/7331-16 գրությամբ ներկայացված քաղաքացի Արամ Հովհաննիսյանին (անձնագիր՝ AK 0576680) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի գլխավոր
մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-07/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան